

Հաստատում եմ՝

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական

համալսարանի ռեկտոր՝ Ե. Աերոբյան

«23» հոկտեմբերի 2023թ.



ԿԱՐԾԻՔ

ԱՌՌԱԶԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Անահիտ Մարգարի Զարգարյանի «Անզլերեն քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգը Իրանի ավագ դպրոցում» թեկնածուականատենախոսության վերաբերյալ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նախ հաղորդակցական կոմպիտենցիաների համակարգում քերականական կոմպիտենցիայի որպես կարևորագույն բաղադրիչների որոշարկմամբ, երկրորդ՝ հաղորդակցական քերականության ուսուցման մեթոդների ինտեգրված կիրառությամբ: Վերջինս էլ դառնում է հետազոտության գերակա նպատակը: Հստակորեն ուրվագծված են նաև այս նպատակից սերվող հետազոտության խնդիրները, որոնց հարացույցում առավելապես կարևորվում են փոխներգործուն մեթոդների կիրառության արդյունավետությունը քերականության դասավանդման գործընթացում Իրանի ավագ դպրոցում՝ մշակված վարժությունների հասուկ համակարգի օգնությամբ: Արժանահավատ են ընտրված տեսական, էմպիրիկ մեթոդների համակցումը մաթեմատիկական-վիճակագրական վերլուծությամբ:

Ընտրված փոխներգործուն ուսուցման մեթոդաբանությունը համահունչ է Իրանի կրթական իրողություններին, որը սահմանում է հետազոտության տեսական կարևորությունը: Իսկ հետազոտության վերջնարդյունքները կարող են կիրառություն գտնել անզլերեն դասերի պլանավորման, դասընթացի նախագծման գործընթացում: Առաջադրված նպատակը ու խնդիրները որոշարկում են աշխատանքի կառուցվածքը, որի տրամաբանական շարակցությունը ապահովում է առաջադրված խնդիրների հաջորդական հանգուցալուծումը: Այսպես օրինակ՝ աշխատանքի առաջին գլխում («Անզլերեն քերականության ուսուցման առանձնահատկությունները Իրանի հանրակրթական դպրոցում») լայն դաշտով ներկայացվում են անզլերեն քերականության ուսուցման տիպաբանությունը իրանական համատեքստում, և առավել մասնակիորեն անդրադարձ է արվում անզլերեն քերականության ուսուցման հաղորդակցական-ճանաչողական սկզբունքներին՝ ադյուսելով այն քերականության դասավանդման փոխներգործուն մեթոդներին: Փոխներգործուն քերականական ընդհանրական բնութագիրը առավելապես որոշարկվում, համահարաբերակվում է

հարուստ ավանդույթներ ունեցող իրանական դպրոցին ու մշակույթին: Այս գլխում առաջիկա խնդիր է դրվում հստակորեն սահմանել հաղորդակցական քերականության ռազմավարությունները և ըստ ռազմավարությունների՝ ընտրել ու մշակել փոխներգործուն վարժությունների համարժեք համակարգ: Մի մոտեցում, որ չի կարող դառնալ նույնիսկ չնչին տարակուսանքի առիթ :

Հաղորդակցական մոտեցմամբ քերականությունը ձեռք է բերում այլ դերակատարում՝ նպաստել օտար լեզվով արդյունավետ հաղորդակցությանը իրական խոսքային պայմաններում: Նոր դերակատարումը պահանջում է նոր մեթոդների կիրառություն, որ դառնում է քերականների համար դժվարագույն խնդիր, քանի որ այն միտված է Իրանի հայկական վարժարաններում սովորող հայալեզու աշակերտներին, որոնք տիրապետում են բազմակերցությանը, բազմալեզվությանը /ատ. էջ 15/: Այս դժվարությունները հաղթահարելու համար էլ ընտրվում է փոխներգործուն մեթոդը/համակարգչային ծրագիր, Smart Notebook և այլն/, որոնք նպաստում են ոչ միայն նյութի յուրացմանը, այլ ունեն ճանաչողական արժեք, քանի որ այս մեթոդը համադրվում է հետազոտականի հետ:

Տրամաբանության թելադրանքով հաջորդ քայլում կարևորվում է հաղորդակցական կոմպիտենցիայի ձևավորման հարցը, որի լուծումը դժվարանում է մի շարք պատճառներով /ուսուցման անբավարար ժամաքանակ, ավանդական մեթոդի գերակա կիրառություն և այլն/: Այս դժվարությունները հաղթահարելու համար առաջարկվում է համադրել ճանաչողական ռազմավարությունը վերաճանաչողականի հետ: Վերջինս հնարավորություն է տալիս ուսանողին պլանավորել, վերահսկել, գնահատել իր ուսուցման գործընթացը /Ատ., էջ. 46/: Այս հարթությամբ կարևորվում է ռազմավարությունների ընտրության հարցը՝ քերականության գործընթացում: Իսկ իրանական դպրոցներում այս հարցը առավելապես բարդանում է երկրորդ, երրորդ օտար լեզուների ճանաչողական և վերաճանաչողական ռազմավարությունների ընտրությամբ:

Երրորդ գլխում /«Անգլերենի քերականության փոխներգործուն մեթոդական համակարգի արդյունավետության ստուգումը» իր ողջ ընդգրկվածությամբ փորձում է մեթոդների համակարգով ապացուցել առաջադրված վարկանիշի հավասարությունը: Մրանցից են խաղերը և դրանց բազմակիրառման տեխնոլոգիաները հաղորդակցական մշակութային համատեքստում՝ ազգային անգլիական, հայկական, պարսկական խաղեր: հետաքրքրական են այս տեսանկյունից համակարգչային հնչյունավորված և համապատասխան մակագրերով խաղերը:

Առավելապես կարևորվում է քերականության ուսուցման հաղորդակցական - ճանաչողական սկզբունքը, ըստ որի քերականական նյութի յուրացումը պետք է արվի ոչ միայն բնագիր տեքստի, այլ նաև խոսույթի մակարդակում: Փորձարարական ուսուցման ընթացքում որպես փոխներգործուն մեթոդներ կիրառվել են նաև կատակներ, անեկտոդներ, ասույթներ, ասացվածքներ, որոնցում որպես նվազագույն միավոր սահմանվել է լեզվակադապարը: Փորձարարական խմբի ուսուցման

արդյունքների վերլուծությունը հաստատում է այս մեթոդի արդյունավետությունը: Այս տեսանկյունից առանձնապես արժևորվում են հավելվածներում ներկայացված փոխներգործուն մեթոդների բազմազանությունը:

Այս ամենով հանդերձ կուզենայինք անել մի շարք դիտարկումներ

1. Հավելվածներում նշվող որոշ առաջադրանքներում հատկորեն որոշարկված չի, թե այդ մեթոդը կամ մեթոդների համալիրը քերականական որ երևույթի ուսուցման դեպքում է կարելի կիրառել:
2. Կետադրությանը /ստորակետին/ վերաբերող օրինակները համակարգել մեկ տեղում: Եվս մեկ առաջարկ կապված ստորակետերի հետ: Հավելվածների բաժնում էջ 138, 139 ուշադրության կիզակետում են գրավոր խոսքում այն օրինակները, որոնցում ստորակետերի բացակայությունը կարող է մթազնել խոսույթի իմաստը: Տեղին կլիներ այս հարցը քննության առնել նաև բանավոր խոսքում, մասնակիորեն դադարի դաշտում:
3. Արդյունավետ կլիներ հավելված 2-ում ներկայացված որոշիչ երկրորդական նախադասությունների համապատասխան շաղկապի ընտրությանն առաջադրանքում ներառնել նաև that, which շաղկապներով օրինակներ, քանի որ աշակերտները գրեթե միշտ դժվարանում են դրանց ընտրության հարցում /Ատ., էջ 129-130/:
4. Հիմնախնդրի ուսումնասիրության շրջանակում կարելի էր փոքր-ինչ ընդարձակ ներկայացնել ուսուցման փոխներգործուն մեթոդների, եղանակների կիրառման հնարավորությունները Իրանի ավագ դպրոցում:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս մասնակի դիտարկումները չեն նսեմացնում սույն հետազոտության արժանիքները: Փորձարարական ուսուցման արդյունքները հաստատում են նախնական վարկածի ճշմարտացիությունը և հիմնավորում Իրանի ավագ դպրոցում անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետությունը: Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, և Անահիտ Զարգարյանը արժանի է իր հայցած ԺԳ.00.02-«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» /անգլերեն լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընունվել է 2023թ. հոկտեմբերի 23 «Օտար լեզուների և գրականություն» ամբիոնի և «Մանկավարժության» ամբիոնի թիվ 6 համատեղ նիստում:

Ամբիոնի նիստին մասնակցել են ք.գ.դ, պրոֆ, Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Հարությունյանը, մ.գ.թ. Ն. Նալբանդյանը, մ.գ.թ., Լ. Տոնոյանը, մ.գ.թ. դոցենտ Լ. Մադենյանը, ք.գ.թ., դոցենտ Շ. Տեր – Աղամյանը, մ.գ.թ., դոցենտ Թ. Մելիքյան, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսորներ Ռ. Մարդոյանը, Ա. Մկոյանը, մանկ. գիտ. թեկնածու,

դոցենտներ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Աղամյանը, Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը:

Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ,  
Բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

Ա. Հովհաննիսյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,  
Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ

Լ. Ղուկասյան

Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ Ա. Հովհաննիսյանի և Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունները հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝ Կ.Գ.Թ., դոցենտ՝

Կ. Պետրոսյան

